

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

### ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ



Վրաստանի խորհրդարանում մեկնարկեց Վրաստանի կառավարության կողմից Վրաստանի խորհրդարան ներկայացված «Վրաստանի 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի (կից նյութերով) և «Երկրի 2025-2028 թվականների հիմնական տվյալներն ու ուղղությունները» փաստաթղթի վերանայման կարգը:

Խորհրդարանի բյուրոն պաշտպանել է բյուջեի նախագծի և

թվականի հոկտեմբերի 3-15, որը կազմվել է խորհրդարանի ֆի-

նանսաբյուջետային հանձնաժողովի կողմից: Ըստ նախագծի՝ իրական տն- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՏԱՐԵԴԱՐՁ

### ԻՐԱՎԼԻ ԿՈՒՐԱԽԻՉԵ. «2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՔ ՎԵՐՉ ԴՐԵՅԻՆԵ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ»



«Վրացական երազանքի» նախընտրական քարոզարշավի շրջանակներում ընտրողների հետ հանդիպմանը՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Կուրխիձեն անդրադարձավ 2012 թվականի հոկտեմբերի 1-ին համատեղ ջանքերով ավտորիտար ռեժիմի դեմ հաղթանակի 12-րդ տարեդարձին:

- Ցանկանում եմ մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնել պարոն Բիծինա Իվանիշվիլիին՝ հանցավոր ռեժիմի պարտության և 2012 թվականին ժողովրդավարական անց-

ման համար: Այսօր էլ Բիծինա Իվանիշվիլին մեր երկրում պետական անկախության, խաղաղության և երկրի զարգացման գլխավոր երաշ-

### ԲԻԶԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «12 ՏԱՐԻ ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՂԱՎԱՆՈՐԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԵՅԻՆԵ ՄԱՋԵ ԿԱՄՐՁՈՎ»

12 տարի առաջ, 2012 թվականի հոկտեմբերի 1-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը երկրի ղեկավարության լծակները խլեց «Միասնական ազգային շարժում» կուսակցությունից և նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջինը երեք անգամ անընդմեջ հաղթեց խորհրդարանական ընտրություններին և, ամենայն հավանականությամբ, կհաղթի նաև ընթացիկ տարվա հոկտեմբերի 26-ին անցկացվելիք ընտրություններին:



Իշխանության գլուխ «Վրացական երազանքի» գալու կապակցությամբ՝ կուսակցության պատվավոր նախագահ Բիծինա Իվանիշվիլին հատուկ ու-

ղերծով դիմեց երկրի բնակչությանը: Ուղեր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «3000 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՄԵՔ ԳՆԵՔ ՍՏԵՂԾԵԼ ԴԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԴԵՍՉԻ ԱՅՍՕՐ ԱՅՆ ԴՐՍԻՅ ԿԱՌԱՎԱՐՎԻ, 1700 ՏԱՐՎԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՐՈՆԸ ԱՅԼ ԴԱՎԱՆԱՆՔՈՎ ՓՈԽԱՐԻՆՎԻ»



Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, հանդես գալով թելավիում «Վրացական երազանքի» վերջերս նախընտրական քարոզարշավին, անդրադարձավ խորհրդարանի ընդունած աղմկահարույց օրենքների ու դրանց վերաբերյալ եվրոպայից և Ամերիկայից հնչող քննադատությանը:

- Վրացիների եվրոպական նույնականությունը հիմնված է նրա բացառիկ

մշակույթի բազմադարյա դավանանքի և խնամքով պահպանված ավանդույթների վրա,- հայտա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԻՆՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՋՄԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԱՉԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈՏԱԲՆԱԿ ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆՆԵՐՈՒՄ



2024 թվականի հոկտեմբերի 26-ին կանցկացվեն Վրաստանի խորհրդարանական ընտրությունները:

Ընտրողները չորս տավա ժամկետով համասնական համարողների 150 պատգամավորներին: Վրաստանի

խորհրդարանի անդամների մանդատները կբաշխվեն այն քաղաքական կուսակցությունների միջև, որոնք կստանան ընտրություններին մասնակից ընտրողների իրական ձայների առնվազն 5 տոկոսը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

կարգի հիման վրա ընտրելու են Վրաստանի խորհրդարանի 150 պատգամավորներին: Վրաստանի

## ՀԱՅԱՍՏԱՆ

### «ԴՐՈՇՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ»՝ ԶԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐԶԵՎԵՅ 21-ՐԴ ԴԱՐԻ ԶՈՐՐՈՐԴ ՄՅՈՒՈՆԸ

Սեպտեմբերի 28-ին՝ Սուրբ Գեորգ քաջամարտիկ զորավարի հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Սրբալույս Սյուռռնի օրհնությունը:



Սյուռռնի օրհնության սրբազան արարողությանը ներկա էին Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, Հայ եկեղեցու թեմակալ առաջնորդներ, թեմական պատվիրակություններ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Հայաստանի ԱԺ պատգամավորներ, Հայաստանի կառավարության անդամներ, պետական այրեր, ազ-

գային բարերարներ, մշակույթի, գիտության, հասարակական և քաղաքական գործիչներ, Հայաստանից ու Սփյուռքից ժամանած բազմահազար ուխտավոր հայորդիներ, ինչպես նաև՝ Քրիստոնեական եկեղեցիների և միջեկեղեցական կառույցների պատվիրակներն ու ներկայացուցիչները:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

### ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄԻՅ ՀԵՏՈ ՎԵՐԱՍԾՎԵՅ ԷԶՄԻԱՍՏԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Սեպտեմբերի 29-ին՝ Վարազա Սուրբ Խաչի տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մայր Տաճարի Ավագ Խորանի Սուրբ Սեդանը և մատուցվեց Հայրապետական Սուրբ Պատարագ:



Տաճարի վերածնունդն ու պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Հայաստանի կառավարության և Անվտանգության խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ, Մայր Աթոռում պաշտոնա-

վարող եպիսկոպոսներ, Հայ եկեղեցու թեմակալ առաջնորդներ, թեմական պատվիրակություններ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Քրիստոնեական եկեղեցիների և միջեկեղեցական կառույցների պատվիրակներն ու ներկայացուցիչները, ինչպես նաև՝ ազգային բարերարներ, մշակույթի, գիտության և հասարակական գործիչներ, Հայաստանից ու Սփյուռքից ժամանած բազմահազար ուխտավոր հայորդիներ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԿԱՂԵՐ

ԳԻՈՐԳԻ ԱՄԻՆՍԿԱՐԻՆ ԶՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՅ

ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇՈՒԼԱԶԵՆ

Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարար Գիորգի Ամիլխվարիձեի հրաժարական է տվել:

Նախարարությունում անցկացրած ճեպասուլիսում Գիորգի Ամիլխվարիձեի, ներկայացնելով իր պաշտոնավարման ընթացքում իրականացված բարեփոխումները, հայտարարեց, որ մտադիր է վերադառնալ բիզնես գործունեությանը:

Գիորգի Ամիլխվարիձեի կրթության նախարարի պաշտոնում նշանակվել էր անցած տարվա մարտին: Մինչ այդ, նա ղեկավարել է խորհրդարանի կրթության և գիտության հանձնաժողովը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն շնորհակալություն է հայտնել Գիորգի Ամիլխվարիձեի կրթության, գիտության և երիտասարդության նախարարի պաշտոնում արդյունավետ աշխատանքի համար: Վարչապետը ներկայացրեց նաև Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նոր նախարար՝ 40-ամյա Ալեքսանդր Շուլաձեին:

Ալեքսանդր Շուլաձեն ավարտել է Թբիլիսիի Ի.Վ.Ջավախիշվիլի անվան պետական և Յուրի Մալախուձեի «Լա Սապիենցա» համալսարանները, իրավագիտության դոկտոր է: Տարբեր ժամանակներում աշխատել է՝ որպես Վրաստանի արդարադատության բարձ-



րագույն խորհրդի միջազգային ղեկարտամենտի ղեկավար, Թբիլիսիի քաղաքային և Գերագույն դատարանի դատավոր: Նա իրավիքներ է դասախոսել Թբիլիսիի պետական համալսարանում և դոցենտ «Ալտե համալսարանում»: Ալեքսանդր Շուլաձեն աշխատել է նաև՝ որպես կրթության նախարարի առաջին տեղակալ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Ե ՎՐԱՍՏԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒԳԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տեսական աճը նախատեսված է 5,5 տոկոսի չափով, իսկ միջնաժամկետ հեռանկարում իրական տնտեսական աճի կանխատեսումը կազմում է 5,3 տոկոս: Ընթացիկ տարվա միջին գնաճի կանխատեսումը զգալիորեն ցածր է նպատակային ցուցանիշից և կազմում է 1,5 տոկոս, մինչդեռ միջնաժամկետ կտրվածքով այն գտնվում է նպատակային ցուցանիշի սահ-

մաններում (3 տոկոս): Անվանական ՅՆԱ կանխատեսումը սահմանվել է 97,4 մլրդ լարի, մինչդեռ մեկ շնչի հաշվով հաշվարկված համախառն ներքին արդյունքը գերազանցում է 9600 դոլարը:

2025 թվականի համախառն քուլտուրայի ծախսային մասը կազմում է 31,2 մլրդ լարի, որի շրջանակներում նախատեսվում է ամբողջությամբ ֆինանսավորել պետության ստանձնած պարտավորությունները:

Նախագծի համաձայն՝ 2025 թվականին Վրաստանի պետությունը եկամուտների ընդհանուր չափը, նախորդ տարվա հաստատված պլանով նախատեսված դրույթաչափի համեմատ, աճել է 2.281,0 մլրդ լարիով և որոշվել է 26.850,5 մլրդ լարի չափով, եւ պետական բյուջեի վճարումների (հատկացումների) չափը կազմում է 27 046,5 մլրդ լարի (2024 թվականի հաստատված պլանի համեմատ ավելանում է 2016,1 մլրդ լարիով):

«ԹԲԻԼԻՍՈՒԲԱ»

ԱՅՍՕՐ ԹԲԻԼԻՍԻՆ ՆՇՈՒՄ Ե ԻՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԸ

Այսօր՝ հոկտեմբերի 5-ին, Թբիլիսիում մեկնարկեցին մայրաքաղաքի ավանդական տոնի՝ «Թբիլիսոբային» նվիրված միջոցառումները:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ հոկտեմբերի 5-ի և 6-ի միջոցառումները կանցկացվեն Ռիդե այգում, Օրբելիանիի հրապարակում և Աբանոթուբանիում:

- Զոկտեմբերի 5-ին և 6-ին «Թբիլիսոբա» եկող հյուրերին Ռիդե զբոսայգում և Օրբելիանիի հրապարակում կդիմավորեն տոնական զարդարանքներով և ինստալացիաներով, այստեղ կկազմակերպվեն բաց կինո, գաստրոնոմիական և գինու փառատոներ, ձեռնարկատիրական շուկա: Օրվա ընթացքում կանցկացվեն մանկական համերգներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ, ինչպես նաև՝ երաժշտական երեկոներ և թատերական ներկայացումներ,- ասաց Կախա Կալաձեն:

Թբիլիսիի քաղաքապետի խոսքով՝ Օրբելիանիի հրապարակում

կուն հյուրերին կհյուրասիրեն երաժշտական խմբերը, իսկ Ռիդե այգի այցելողներին կդիմավորի էստրադային արտիստների երաժշտական բազմազան ծրագրով:

- Բացի այդ, Աբանոթուբանիում կանցկացվի ցուցահանդես-վաճառք՝ «Թբիլիսյան բազմազանություն»: Զոկտեմբերի 5-ին, ժամը 20:00-ին տեղի կունենա Թբիլիսիի պատվավոր քաղաքացիների պարգևատրման արարողությունը, որը կհեռարձակվի ուղիղ եթերով,- ասաց Կախա Կալաձեն:



ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎԻ «ՀԱՇՏԵՅՄԱՆ» ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԱՅ ԱՆՊԱՏԱՍԻԱՆ



ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի շրջանակներում՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, անդրադառնալով բռնազավթված տարածքների հարցում Վրաստանի իշխանությունների նոր դիրքորոշմանը, հայտարարեց, որ Մոսկվան պատրաստ է օգնել «Վրաստանին, Աբխազիային և Գրաբլային Օսեթիային հարաբերությունների կարգավորման գործընթացում, եթե դրանով շահագրգռված լինեն հենց իրենք՝ երկրները»:

Հատկանշական է, որ ռուս դիվանագետը «հաշտեցման» իր առաջարկությունը ներկայացնում է՝ որպես «անկախ պետությունների» հետ Վրաստանի հարաբերությունների կարգավորում և Աբխազիան ու Ցխինվալիի տարածքները չի ընկալում որպես Վրաստանի անքապ-

տելի հատված: Դրա վկայությունն է նաև Ռուսաստանի Դումայի պատգամավոր, «Անկախ պետությունների համագործակցություն» կազմակերպության հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Չատուլիձեի խոսքը, որ Ռուսաստանը չի դի-

տարկում Վրաստանից չվերահսկվող Աբխազիայի և Գրաբլային Օսեթիայի (Ցխինվալի) դե-ֆակտո հանրապետությունները Վրաստանի վերադարձնելու տարբերակը:

Բնական է նաև այն, որ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը որեւէ կերպ չի արձագանքել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հայտարարությանը: Այնուհայտ է, որ Լավրովի հայտարարությունը պաշտոնական Թբիլիսիին չէր կարող բավարարել, քանզի այն հակադրվում է տարածքային ամբողջական, միասնական Վրաստան ձեւավորելու կառավարող թիմի ծրագրին:



ԻՍՐԱՅԵԼ - ՀԱՄԱՏ ՀՐԹՈՒՎ-ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԼԻՔՆԱՆԻՆ

Իսրայելի բանակը հարվածներ է հասցրել Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի հարավային արվարձաններին:

Իսրայելը հարվածել է նաև՝ Լիբանանի Սիրոն քաղաքի մերձակայքում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարին, որտեղ ներկա դրությամբ ապաստանել է գրեթե 50 000 փախստական:

Լիբանանի առողջապահության նախարարության տվյալներով՝ երկրի հարավային շրջաններին, արևելյան Բեքաայի հովտին և Բեյրութին Իսրայելի հասցրած հարվածների հետևանքով՝ վերջին 24 ժամում առնվազն 95 մարդ է զոհվել, 172 մարդ՝ վիրավորվել: Սեպտեմբերի 23-ից շարունակվող ռազմական գործողությունների զոհերի թիվը գերազանցել է 1000-ը:

Իսրայելը ցամաքային գործողություն է սկսել Լիբանանի հարավում: Լիբանանի հարավում տեղի ունեցած բախումների ժամանակ 7 իսրայելցի զինվոր է զոհվել, կան վիրավորներ:

ՄՊԱՆՎԵԼ Ե «ՉԵՋՐՈՒԼԼԱԴԻ» ՂԵԿԱՎՈՐԸ

Իսրայելը հարձակվել է «Չեզբրլլահի» կենտրոնական շտաբի վրա: Հարձակման արդյունքում սպանվել է խմբավորման ղեկավար Հասան Նասրալլային, «Չեզբրլլահի» այլ անդամներ, այդ թվում՝ հարավային ճակատի հրամանատարը:

Լիբանանի շիական «Չեզբրլլահ» խմբավորումը հաստատում է խմբավորման ղեկավար Հասան Նասրալլայի մահը:

Չեզբրլլահի տարածած հայտարարության մեջ նշվում է, որ խմբավորումը կշարունակի պայքարել Իսրայելի դեմ, կաջակցի Գազային և Պաղեստինին ու կպաշտպանի Լիբանանի ժողովրդին:

ԻՍՐԱՅԵԼԸ՝ ԻՐԱՆԱԿԱՆ ՀՐԹՈՒՆԵՐԻ ԹԻՐԱՆ

Զոկտեմբերի -1-ին Իրանը ավելի քան 100 հրթիռ է արձակել Իսրայելի ուղղությամբ:

Իրանի «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը» պնդում է, որ Իսրայելի ուղղությամբ տասնյակ հրթիռներ են արձակվել և, եթե Իսրայելը պատասխան տա, Թեհրանի պատասխանը ավելի կործանարար կլինի:

ՆԱՏՕ

ՄԱՐԿ ՌՅՈՒՏԵՆ ՍՄԱՆՁՆԵՑ ԱԼՅԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զոկտեմբերի 1-ին, Սիրիայի արևմտյան սահմաններում վարչապետ Մարկ Ռյուտեն ստանձնել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնը: Նա այդ պաշտոնում փոխարինեց Յենս Ստոլտենբերգին:

Մարկ Ռյուտեն 13 տարի ղեկավարել է հոլանդական չորս կողմից կառավարություններ:

ՖՐԱՆՍԻԱ

ԷՄԱՆՈՒԷԼ ՄԱԿՐՈՆԻ ԻՍՓԻՉՄԵՆԹԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Ֆրանսիայի Ազգային ժողովի օրենսդրական հանձնաժողովը մերժել է «Անկոտրում Ֆրանսիա» ծախս կուսակցության առաջարկը՝ երկրի նախագահ Էմանուել Մակրոնին իմփիչմենք հայտարարելու վերաբերյալ:

Նախագահին իմփիչմենք հայտարարելու նախաձեռնությանը հավանություն է տվել 15 պատգամավոր, դեմ է արտահայտվել 54 պատգամավոր:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ՝ ԹԵՎ ԱՆՎԼԵԴԻԱՆԻ ԵՎ ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության պետական նախարար Թեա Ավալբեղիանին հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ և

լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ համագործակցության հետ կապված մի շարք հարցեր:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԱՄԱՔԱՆՔԻ, ՄԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՋԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչական միավորներում շարունակվում է սպորտային եւ մանկական ժամանցի տարածքների կազմակերպումը:

Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչական միավորներում ընթացքի մեջ է 75 երեխայի համար նախատեսված եւս մեկ ժամանակակից շափանիչներով մանկապարտեզի շինարարությունը:

Մունիցիպալիտետի քաղաքապետ Սեյրոն Մակարյանը, ենթակառուցվածքների եւ վերահսկողության ծառայությունների ղեկավարների հետ, զմահատեց այս փուլի համար կատարված աշխատանքները եւ տվեց համապատասխան առաջարկություններ:

Շինարարական աշխատանքներն ընդգրկում են ինչպես ներքին ենթակառուցվածքի, այնպես էլ՝ բակի բարեկարգում: Ընթացքի մեջ է կառուցվում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ծրագիրն իրականացվում է Վրաստանի մունիցիպալ զարգացման հիմնադրամի կողմից՝ 3 261 495 լարի գումարով:

Ախալքալաքի Մ.Սարգսյան փողոցում նոր հրապարակ է կառուցվում: Աշխատանքները ներառում են կանաչապատում, մանկական ատրակցիոնների տեղադրում, սիմուլյատորների, աթոռների եւ աղբամանների տեղադրում:

Ախալքալաքի փոխքաղաքապետ Թեյմուրազ Մճեղիձեն, ենթակառուցվածքների ծառայության պետ Արա Մովսիսյանն ու վերահսկողության ծառայության պետ Արթուր Դավթյանը ստուգեցին ավարտված եւ ընթացիկ աշխատանքները:

Ենթակառուցվածքային ծրագիրը ֆինանսավորվում է տեղական բյուջեից, եւ դրա արժեքը կազմում է 308 888 լարի:

Ախալքալաքի քաղաքապետարանն ավելացրել է

եւս մեկ ժամանակակից մարզական օբյեկտ:

Բարալեթի վարչական միավորում գտնվող մարզադահլիճն ամբողջությամբ վերակառուցվել ու համարվել է անհրաժեշտ գոյություն:

Ինչպես հայտարարեց Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Սեյրոն Մակարյանը՝ իրենց համար սույն ենթակառուցվածքների կարգավորումն առաջնային խնդիր է:

ԱՄԱՆՅԻՆԵ, ՀՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՐԿԱՐԱԿՅԱՑՆԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՐ

Յուլիտեմբերի 2-ին, Ախալքալաքի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, սակրեբուլոյի նախագահի առաջին տեղակալ Դավիթ Տաբատա-



ծեն եւ քաղաքապետարանի կառուցվածքային միավորների ներկայացուցիչներն այցելել են քաղաքի ծերանոցն ու շնորհավորել նրանց հոկտեմբերի 1-ին նշվող երկարակյացների օրվա կապակցությամբ:

Միջոցառումը կազմակերպել էր Ախալքալաքի մունիցիպալիտետի մշակույթի, կրթության եւ սպորտի ծառայությունը:

ՄԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԼԻ՝ ԱՄԱՆՅԻՆԵՈՒՄ

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային կենտրոնում՝ Ախալքալաքում, ընթացքի մեջ է ժամանակակից չափորոշիչներին համապատասխան նոր մարզահամալիրի շինարարությունը: Մարզական նոր օբյեկտը ներառում է մեծ եւ փոքր լողավազաններ, տրինաժորներ, ըմբշամարտի, բռնցքամարտի դահլիճներ՝ հանդերձարաններով եւ ցնցուղարաններով: Մարզահամալիրի նախագիծն ընդգրկում է նաեւ սրճարան եւ մարզագույքի խանութ: Մարզահամալիրի հարակից տարածքում կկարգավորվի ավտոկանգառ: Մարզահամալիրը կառուցվում է սահմանափակ հնարավորություններ ունեցող մարզ-

կանց կարիքների հաշվառմամբ:

Ինչպես հայտարարեց Վրաստանի տարածաշրջա-



նային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Իրակլի Քարսելաձեն մարզահամալիրի շինարարության 90 տոկոսն արդեն կատարվել է, եւ այն կավարտվի տարեվերջին:

ԲՈՐԺՈՄԻ, ՆՈՐԱՅՎԵՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՅՔԻՆ

Բորժոմի կենտրոնական հատվածի նորացման նախագծի շրջանակներում ամբողջովին նորացվեց Բորժոմի կենտրոնական պատմական զբոսայգին, վերանորոգվեցին ենթակառուցվածքները, ավելացվեցին կանաչապատ տարածքներ:



Կատարված աշխատանքները դիտեցին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Իրակլի Քարսելաձեն, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին:

Իրականացված նախագծի արժեքը կազմել է 35 միլիոն լարի:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ՀԱՄԱՆԱԸՆ ԵՆԹԻՆ ԱՐՏԱԴՐԱԼՔԸ ԱՃԵԼ Է 12 ՏՈՎՈՍՈՎ

Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, Վրաստանում 2024 թվականի օգոստոսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը կազմել է 12,0 տոկոս: 2024 թվականի առաջին ութ ամիսների միջին ցուցանիշը սահմանվել է 10,0 տոկոս:

ՀՆԱ-ի աճին զգալիորեն նպաստել են հետևյալ ոլորտները՝ մասնագիտական, գիտատեխնիկական գործունեություն, տեղեկատվություն եւ հաղորդակցություն, շինարարություն, ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն, անշարժ գույքի առևտուր:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՄԱՆ ԿՈՒՐՍԸ (4 հոկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետևյալ կուրսը:

Table with 2 columns: Տարադրամ (Foreign Currency) and Լարի (Lari). Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.7335), 1 ԵՎՐՈ (3.0175), 100 ՌՈՒՔԼԻ (2.8723), 1000 ԴՐԱՄ (7.0668).

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «3000 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՄԵՆՔ ԳՆԵՔ ՍՏԵՂԾԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍՉԻ ԱՅՍՕՐ ԱՅՆ ԴՐՍԻՅ ԿԱՌԱՎԱՐՎԻ, 1700 ՏԱՐՎԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՐՈՆԸ ԱՅԼ ԴՎԱՆԱՆՔՈՎ ՓՈԽԱՐԻՆՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարեց Շալվա Պապուաշվիլին՝ հավելելով, որ եթե այդ ավանդույթներից թեկուզ մեկը բացառվի, դա կվերածվի ազգի ինքնության պահպանման բովանդակության ու էության կորստի:

- Ընդդիմությունը հենց այդ ուղիով է ընթանում: Այն ցանկանում է երկիրը զրկել ազգային ինքնությունից, կրոնից, առան-

ծին մարդկանց նույնականությունից, որպեսզի երկրորդական պլան մղվի կրոնը, տղամարդ-կին գաղափարը: Դա է նրանց եվրոպական ուղին: Ցանկանում են հիմնել անաստված՝ առանց պատմության, առանց անհատականության մարդկանց խումբ, որպեսզի հետո՝ թելադրեն, թե որտեղ են նրանք աղոթելու եւ ում են երդում տալու,- նշեց խորհրդարանի նախագահը: Նրա խոսքով, 3000 տարի նրա հա-

մար չենք հիմնել պետություն, որպեսզի այսօր մեզ դրսից կառավարեն եւ 1700 տարվա դավաճանքը փոխենք:

- Ուստի, հոկտեմբերի 26-ին բոլորը քվեարկեն եւ մեկ անգամ եւս քվեարկությանը հաստատեն իրենց դավաճանքը, նույնականությունը, որպեսզի դա պարզ ու հստակ լինի բոլոր՝ ներքին եւ արտաքին թշնամիների համար,- հայտարարեց Շալվա Պապուաշվիլին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆԱԽԱԳԱՅԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ, ԲԱՅՑ ԱՆՏԵՍԵՑ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին հերթական անգամ հանրությանը տարակուսանքի մեջ գցեց իր տրամաբանությունից զուրկ դիրքորոշմամբ:

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին ստորագրել է «Համաներման մասին» օրենքը, որի ուժի մեջ մտնելուց հետո՝ 1000 դատապարտյալ անմիջապես կազատվի, մոտ 4 հազար 800-ի պատժաչափը կկրճատվի տարբեր ժամկետներով: Ընդ որում, համաներմանը վերաբերում է մինչեւ 2024 թվականի հուլիսի 1-ը կատարված հանցագործություններին: Միա-

ժամանակ, երկրի նախագահն անտեսման մատնեց խորհրդարանի ընդունած՝ «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» օրենքը, որի վրա նախագահական վետո չի դրվել, թեպետ չեն ներկայացվել նաեւ օրինականապես անտեսման հիմնավորումները:

Յուլիտեմբերի 3-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պա-

պուաշվիլին, Վրաստանի Սահմանադրության համաձայն, տորագրեց «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» օրենքը, որը չի ստորագրել Սալոմե Ջուրաբիշվիլին: Խորհրդարանի նախագահի խոսքով, այս օրենքը պաշտպանում է բոլոր քաղաքացիների իրավունքները, ներառյալ՝ խոսքի ազատությունը, որպեսզի չոտնահարվեն այլոց իրավունքները, ինչն իսկական ժողովրդավարության էությունն ու գաղափարն է:

ՏԱՐԵՂԱՐԸ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «12 ՏԱՐԻ ՎՐԱՍԱՆԸ ՀԱՂԹԱՎԱՆՈՐԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԵՅԻՆՔ ՄԱՁԵ ԿԱՄՐՉՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծում, մասնավորապես, ասված է. - Այսօր հոկտեմբերի 1-ն է ազատության վերադարձի օրը: Օր, որն արտահայտում է Վրաստանի եւ վրաց ժողովրդի աննախադեպ միասնությունը մեր երկրի դարավոր պատմության մեջ: Օր, որն արտահայտում է անկախ Վրաստանի պատմության գլխավոր հաղթանակը եւ վրացուն իր արժանապատվության վերադարձը, - հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին հավելելով, որ հոկտեմբերի 1-ը պատկանում է ոչ թե որեւէ կուսակցության, որեւէ անձի, այլ՝ վրաց ժողովրդին, Վրաստանի քաղաքացիներին:

ընտանիքի ու սիրելիների մասին, աշխատել, բիզնես ծավալել, կրթություն ստանալ եւ արժանապատվորեն վայելել ծերությունը, - ասված է ուղերձում:

Բիժինա Իվանիշվիլիի հավաստմամբ, հայրենասիրությունը միայն զենքը ձեռքին հայրենիքը պաշտպանելը չէ, մնացած ամեն ինչի հետ մեկտեղ, դա անարդարության դեմ ծայրը բարձրացնելու խիզախությունն է ամենածանր պահին, առավել եւս, երբ ոչ չի համարձակվում ձայն բարձրացնել:

- Մենք համարձակվեցինք: Մենք կարողացանք անել անհնարինը, եւ եթե 2011-ին, երբ ես եկա քաղաքականություն, մարդիկ նույնիսկ վախենում էին փողոց դուրս գալ ու հավաքվել, ապա՝ 2012-ի սեպտեմբերի 29-ին, առնվազն կես միլիոն հայրենասերներ դուրս եկան Թբիլիսիի փողոցներ, որպեսզի բռնությունն արմատացնեն, որ ոչ մեկից եւ ոչնչից չեն վախենում, իսկ հոկտեմբերի 1-ին գնացին քվեատուփերի մոտ եւ ոչ միայն ողջ մնացին, այլեւ հաղթեցին, - իր ուղերձում նշել է Բիժինա Իվանիշվիլին:

Նրա հավաստմամբ, «Վրացական երազանքը» կարողացավ այդ մագե կամրջով Վրաստանը

12 տարի շարունակական խաղաղությամբ հաղթականորեն առաջնորդել, եւ հիմա, երբ անցում ենք այս դժվար ճանապարհի վերջին հատվածը, կենսականորեն կարելի է, որ մեկ անգամ եւս ցույց տանք ողջ աշխարհին՝ միասնության աննախադեպ օրինակ եւ հոկտեմբերի 26-ի ընտրություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերել, որպեսզի ոչ ոք երբեք չհամարձակվի թեկուզ մագաչափ կասկածի տակ դնել՝ «Վրացական երազանքին» Վրաստանի բնակչության աջակցությունը:

- Այնպես որ, հոկտեմբերի 26-ի օրակարգում դրված է ոչ թե քաղաքական համակարանը-հակակրանքի, այլ Վրաստանի լինել-չլինելու հարցը:

Աստուծո՜ւ հայրենիքի առաջ պարտավոր ենք անկախ ու խաղաղ Վրաստան թողնել մեր երեխաներին, մեր հաջորդ սերունդին, դրա համար էլ հոկտեմբերի 26-ին պետք է համախմբվենք եւ հաղթենք: Մեր միակ ճանապարհը խաղաղությամբ, արժանապատվությամբ եւ բարգավաճմամբ դեպի եվրոպա, - ասված է Բիժինա Իվանիշվիլիի ուղերձում:

ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՄԻՉԵ. «2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՆՔ ՎԵՐՉ ԴՐԵՅԻՆՔ ՕՏԱՐԵՐԿՐՅԱԿ ԳՈՐԾԱՎԱՆՆԵՐԻ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խավորն է: Շնորհակալ եմ մեր կուսակցության հիմնադրին եւ պատվավոր նախագահին այն անձնագրիության համար, որով նա երկար տարիներ պաշտպանում է Վրաստանի ազգային շահերը, - այս մասին հայտարարեց «Վրացական երազանքի» նախընտրական շտաբի ղեկավար, վարչապետ Իրակլի Կոբախիձեն՝ Թելավիի նախընտրական հանդիպմանն իր ելույթի ժամանակ:

Իրակլի Կոբախիձեն նշեց, որ 2012 թվականի հոկտեմբերի 1-ին ավարտվել է օտարերկրյա գործակալության ավտորիտար իշխանությունը, որը բազմաթիվ հանցագործություններ է կատարել վրացական պետության եւ վրաց ժողովրդի դեմ:

- 2012 թվականին, երբ վրացիները իշխանությունից հեռացրին արյունոտ ռեժիմը, կա-

խնդիրները նույնպես իրենց խոսքն ասացին: 2012 թվականի հոկտեմբերի 1-ին մենք բռնուրս վերջ դրեցինք օտարերկրյա գործակալության ավտորիտար կառավարմանը, որը բազմաթիվ հանցագործություններ էր կատարում վրացական պետության եւ վրաց ժողովրդի դեմ: Այդ հանցագործություններն էին մարդկանց սպանությունն ու խոշտանգումը, բիզնեսի ռեկեստր, հեռուստաընկերությունների յուրացումը, ընտրությունները կեղծելը եւ այլն: Ամենակարեւորն այն է, որ այս մարդկանց դավաճանական հանցագործությունը մեր երկրին արժեցել է իր տարածքի 20 տոկոսի՝ մեր պատմական Աբխազիայի եւ Սամաչաբլոյի կորուստը: Սա դավաճանություն է, որի համար մեղավորները պետք է պատասխան տան Սահմանադրության ու օրենքի ողջ խստությամբ, - ասաց Իրակլի Կոբախիձեն:



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԶԵՆՎԱՐ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԶԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԶԵՏ

Սեպտեմբերի 27-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մեթոդաբանության եւ վերլուծության դեպարտամենտի ներկայացուցիչները, հարկային հրատապ հարցերի ներկայացման եւ քննարկման նպատակով, հեռավար կարգով աշխատանքային հանդիպում ունեցան հարկատուների հետ:

Աշխատանքային հանդիպման շրջանակներում հարկատուները եւ շահագրգռված անձինք հնարավորություն ստացան ծանոթանալու այնպիսի հարկային հրատապ հարցերի, ինչպիսիք են էստոնական մոդելով անձի կողմից ստացված եւ տրված վարկերի հետ կապված հարկային պարտավորությունները, ֆիզիկական անձի հարկային պարտքերի մարումը, ապրանքային փոխանակման գործարքների ԶԱԳ-ի սահմանում, իրավաբանական անձանց չեղարկման գործընթացը եւ այլն:

Յեռավար հանդիպումը, որին մասնակցեցին ավելի քան 300 ձեռնարկներ, ընթացավ հարցուպատասխանի աշխատակարգով, հարկատուների հնարավորություն



ընձեռնեց՝ սպառնիչ պատասխաններ ստանալ իրենց հետաքրքրող հարցերի շուրջ: Նպատակային խմբերի հետ հստակեցված բնույթ կրող հանդիպումների ծրագիրը՝ նախատեսում է հարկատուների հետ մշտական հաղորդակցություն եւ հարկային օրենսդրությամբ նախատեսված նորարարությունների մասին տեղեկատվության օպերատիվ փոխանցում: Զարկատուների հետ հաղորդակցության ակտիվացման նպատակով՝ գերատեսչությունում ծրագրվում է մեր «Հանդիպման տարածք» հարթակի մշակումը, որը շահագրգռված անձանց հնարավորություն կընձեռնի ծանոթանալ եկամուտների ծառայության ծրագրած հանդիպումների օրացույցի, ինչպես նաեւ՝ անցկացված հանդիպումների ու ծրագրված թեմաների մասին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԻՉԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ՝ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից:

Պահպանության ոստիկանության առաքելությունն է ապահովել երկրի քաղաքացիների անվտանգությունը եւ նրանց գործունեության համար ստեղծել առողջ միջավայր: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի եւ անձի անվտանգության պահպանություն, նաեւ՝ երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

- միջոցներով
\* պահպանություն-ուղեկցում
պահակախմբով
\* ավտոմեքենայի GPS վերահսկողություն
\* անձնական պահպանություն

- Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւյալ սպասարկումները.
\* ոստիկանական պահպանություն
\* պահպանություն տեխնիկական

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՅԵՅԻՆ BRITACOM-Ի ՇԻՆՔԵՐՈՐԳ ԳԱՎԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի առաջին տեղակալ Պատա Կիլաձեն եւ միջազգային հարաբերությունների դեպարտամենտի պետ Սամսոն Ուրդիան մասնակցեցին BRITACOM-ի (գոտու եւ ճանապարհի նախաձեռնության երկրների հարկային վարչակազմերի համագործակցության մեխանիզմ) թվով հիմնգրող ամենամյա գագաթնաժողովին, որտեղ քննարկվեց «Հարկային վարչակազմերի միջեւ համագործակցության ուժեղացման եւ գոտու ու ճանապարհի մեխանիզմի անդամ վարչակազմերի զարգացումը» թեման:

Վերոնշյալ միջոցառումն անցկացվեց սեպտեմբերի 24-26-ին՝ Չինաստանի Չինգ-Վոնգի հատուկ վարչական շրջանում:

Հատկանշական է, որ, որպես մեխանիզմի նախագահ երկրի ներկայացուցիչ (2023 թվականին Թբիլիսիում անցկացված գագաթնաժողովին Վրաստանը մեկ տարի ժամկետով ընտրվեց մեխանիզմի նախագահ երկիր)՝ Պատա Կիլաձեն, ներածական խոսքով բացելով միջոցառումը, ներկայացրեց տարվա ընթացքում իրականացված աշխատանքը եւ նշեց, որ եկամուտների ծառայությունը նշանակալի ներդրում է կատարում գոտու եւ ճանապարհի մեխանիզմի տարբեր նախաձեռնություններում:

Գագաթնաժողովի շրջանակներում՝ միջազգային հարաբերությունների դեպարտամենտի ղեկավար Սամսոն Ուրդիան մասնակցեց «Հարկային միջավայրի բարելավման» թեմայի քննարկմանը:

Նշենք, որ BRITACOM-ի խորհրդի ձայների մեծամասնությամբ, եկամուտների ծառայության պետի առաջին տեղակալ Պատա Կիլաձեն, հարկային վարչակազմի այլ ղեկավար անձանց հետ, երեք տարի ժամկետով ընտրվել է խորհրդի փոխնախագահ: BRITACOM-ի հիմնգրող ամենամյա գագաթնաժողովին մասնակցեցին կազմակերպության 61 անդամ եւ դիտորդական երկրների հարկային վարչակազմերի ներկայացուցիչներ:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն